

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Փետրվարի 12-ին Թբիլիսիում անցկացվեց Արեւելյան գործընկերության անդամ երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպումը, որին ներկա էին Եվրոպական համաժողովի ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն, ԵՄ արտաքին հարաբերությունների ծառայության գլխավոր քարտուղարի տեղակալ Յելզա Շմիդը, «Արեւելյան գործընկերություն» ծրագրի անդամ երկրների պատվիրակությունները: Հանդիպմանը մասնակցեց նաեւ Հայաստանի պատվիրակությունը՝ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ:

Արեւելյան գործընկերության շրջանակներում հանդիպմանը քննարկվեցին համագործակցության արձանագրված արդյունքները, նախաձեռնվեցին գործընկերության հեռանկարները, հանգամանակից անդրադարձ կատարվեց Արեւելյան գործընկերության ճանապարհային քարտեզի իրականացմանը եւ մտքեր փոխանակվեցին Վիլնյուսում կայանալիք գագաթաժողովին ընդառաջ ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ:

Հանդիպման ավարտին տեղի ունեցավ համաժողովի մասնակիցների համատեղ մամուլի ասուլիսը:

արտգործնախարարների հանդիպմանը մասնակցող պատվիրակությունների ղեկավարներին փետրվարի 13-ին ընդունել է Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին, այնուհետեւ հանդիպում է կայացրել Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Թբիլիսիում կայացած նախարարական ոչ պաշտոնական համաժողովի արդյունքները, ինչպես նաեւ Արեւելյան գործընկերության շրջանակներում ընթացող համագործակցությունը եւ Վիլնյուսի գագաթաժողովին ընդառաջ նախապատրաստական աշխատանքները:

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ԵՎՐԱՎՈՄԻՍԱՐԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆԵՂԻՐՆԵՐԸ

Վարչապետ Բիծինա Իվանիշվիլին պետական գրասենյակում ընդունեց Եվրամիության պատվիրակությանը: Այն գլխավորում էր ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլենը:

Կողմերը հանդիպման ընթացքում քննարկեցին Վրաստանում առկա քաղաքական գործընթացները: Վարչապետը Եվրամիության ներկայացուցիչներին շնորհակալություն հայտնեց ՆԱՏՕ-ին եւ Եվրոպական խորհրդին:

րակառույցներին ինտեգրվելու Վրաստանի ձգտումներին աջակցելու համար:

Հանդիպումից հետո Իվանիշվիլին չթաքցրեց, որ հանդիպման հիմնական թեման մոր կառավարության եւ Վրաստանի նախագահի միջեւ կոհաբիտացիան էր, նաեւ՝ այդ գործընթացին առնչված հիմնախնդիրները: «ԵՄ հանձնակատարը հետաքրքրվեց իրավիճակով եւ արտահայտվեց կոհաբիտացիայի գործընթացը շարունակելու օգտին: Մենք նրան ներկայացրինք իրավիճակի նկատմամբ մեր տեսակետը», - ցեց նա:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԵՐՉԵՆԱԼՈՒ ԴԱՏՄԱԿԱՆ ՇԱՆՍ

Նախագահ Միխեիլ Սաակաշվիլին Վրաստանի բոլոր քաղաքական ուժերին կոչ է արել գտնել ընդհանուր լեզու եւ բաց չթողնել Եվրամիությանը մերձենալու պատմական շանսը:

Այդ մասին Վրաստանի նախագահը հայտարարեց ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլենի հետ համատեղ ասուլիսում:

Սաակաշվիլին ցեց, որ հենց այդ նպատակով էլ իր թիմը եւ անձամբ ինքը խորհրդարանում կոչ են անում ընդունել սահմանադրական փոփոխություններ այն մասին, որ Վրաստանը կդառնա միայն Եվրամիության, այլ ոչ թե որեւէ ուրիշ քաղաքական միավորման անդամ:

Նախագահ Սաակաշվիլին ցեց՝ մինչեւ Վիլնյուսում կայանալիք ԵՄ գագաթաժողովը, հարկավոր է հասնել համաձայնեցված գործողությունների: «Դրա համար ես պատրաստ եմ հաճախ հանդիպել վարչապետի հետ, եւ մեր հիմնախնդիրները լուծել բանակցությունների սեղանի շուրջ: Մենք ունենք պատմական շանս եւ պետք է համատեղ օգտագործենք այն», - ընդգծեց նա:

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆՎՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԲԻԱ



Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին փետրվարի 14-ին մեկօրյա պաշտոնական այցով եղավ Թուրքիայում:

ցավ Վրաստանի վարչապետի հանդիպումը իր թուրք գործընկեր Ռեջեփ Թայիֆ Էրդողանի հետ: Հանդիպմանը նախորդել էր դիմավորման պաշտոնական արարողությունը: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ առկա տնտեսական եւ քաղաքական հարաբերությունների է՛լ ավելի խորացման հեռանկարները:

Վարչապետերի առանձնագրույցից հետո կայացավ կառավարական պատվիրակությունների միջեւ առկա տնտեսական եւ քաղաքական հարաբերությունների է՛լ ավելի խորացման հեռանկարները:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Այցի շրջանակներում կայանալիք քննարկվեցին երկու երկրների միջեւ առկա տնտեսական եւ քաղաքական հարաբերությունների է՛լ ավելի խորացման հեռանկարները:

Վարչապետերի առանձնագրույցից հետո կայացավ կառավարական պատվիրակությունների միջեւ առկա տնտեսական եւ քաղաքական հարաբերությունների է՛լ ավելի խորացման հեռանկարները:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԳԻՊՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՔԱՅԼ

Ինչպես արդեն հաղորդել ենք, փետրվարի 7-ին Վրաստանի խորհրդարանը որոշում էր ընդունել հետաձգել խորհրդարանում Վրաստանի նախագահի ամենամյա հաշվետվության հաջորդ օրվա համար նախատեսված ներկայացումը: Իր հերթին նախագահը որոշում էր ընդունել ամենամյա զեկուցմանը հանդես գալ Հանրային գրադարանի շենքում, թեպետ փետրվարի 8-ին Հանրային գրադարանի շենքի մոտ կայացած հանրահավաքի մասնակիցները արգելքներ հարուցեցին այդ մտահղացմանը: Նախագահը իր զեկույցն ընթերցեց նախագահական պալատից:



Տեղի ունեցած դիմակայության կարգավորման նպատակով Միխեիլ Սաակաշվիլու նախաձեռնությամբ փետրվարի 11-ին նախագահական նստավայրում տեղի ունեցավ Միխեիլ Սաակաշվիլու հանդիպումը խորհրդարանի նախագահ

Դավիթ Ուսուփաշվիլու հետ: Հանդիպմանը մասնակցեց նաեւ խորհրդարանական փոքրամասնության ղեկավար Դավիթ Բաքրաձեն: Հանդիպմանը քննարկվեցին

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ ԿԱՆՅՎԱՎԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փետրվարի 18-ին Հայաստանում կանցկացվեց երկրի նախագահի ընտրությունները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից որպես Հայաստանի նախագահի թեկնածուներ, գրանցվել են պետության գործող նախագահ Սերժ Սարգսյանը (Հայաստանի հանրապետական կուսակցություն), Հայաստանի նախկին վարչապետ, «Ազատություն» կուսակցության առաջնորդ Հրանտ Բագրատյանը, Հայաստանի արտաքին գործերի նախկին նախարար Արման Մելիքյանը, քաղաքագետ Անդրիաս Դուկասյանը, էպուրագետ Վարդան Սեդրակյանը:

ցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանը, խորհրդային շրջանում հայտնի այլախոհ, «Ազգային ինքնորոշման միավորում» կուսակցության ղեկավար Պարույր Հայրիկյանը, Դարաբաղի արտաքին գործերի նախկին նախարար Արման Մելիքյանը, քաղաքագետ Անդրիաս Դուկասյանը, էպուրագետ Վարդան Սեդրակյանը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆԳԻՊՈՒՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԶԵՐՄ ՄԹՆՈՒՈՐՏՈՒՄ

Փետրվարի 11-ին Թբիլիսիում անցկացվող Արեւելյան գործընկերության անդամ երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը մասնակցելու նպատակով Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Նույն օրը կայացան Վրաստանի եւ Հայաստանի արտաքին գերատեսչությունների ղեկավարներ Մայա Փանջիկիձեի եւ Էդվարդ Նալբանդյանի բանակցությունները, որոնց ընթացքում շարունակվեց մեկ ամիս առաջ Երեւանում սկսված երկխոսությունը երկկողմ հարաբերությունների ամրապնդման եւ ընդլայնման վերաբերյալ:

թյուններին բնորոշ ջերմ մթնոլորտում անցած հանդիպման ընթացքում Վրաստանի եւ Հայաստանի արտաքին գերատեսչությունների ղեկավարներ Մայա Փանջիկիձեի եւ Էդվարդ Նալբանդյանի բանակցությունները, որոնց ընթացքում շարունակվեց մեկ ամիս առաջ Երեւանում սկսված երկխոսությունը երկկողմ հարաբերությունների ամրապնդման եւ ընդլայնման վերաբերյալ:

Վրաց-հայկական հարաբերու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սասակաշվիլին հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ, որը վերաբերում է ձեռնարկատիրական, ֆինանսական եւ տնտեսական համայնքներին:

Համայնքներն եւ չհայտարարված եկամուտների ու սեփականության ազատակամացման մասին օրինագիծը ստացել է «Միխեիլ Սասակաշվիլու նախաձեռնություններ» անվանումը:


Վրաստանի նախագահն առաջարկում է կարծել քրեական գործերն այն անձանց նկատմամբ (եւ պատժից ազատել դատարարական օրենսդրության միջոցով 2013 թվականի հունվարի մեկը կատարել են հանցագործություններ, նախատեսված Վրաստանի քրեական օրենսգրքի հետեւյալ հոդվածներով. 192, 192/1, 193, 194, 194/1, 196, 197 (առաջին եւ երկրորդ մասերով), 197/1, 199, 200-200/6, 201, 205/1,

210, 211, 216, 218, 219, 220, 220/1, 221, 214 (առաջին եւ երկրորդ մասերով), 214 (հինգերորդ մասով): Եթե օրենքն ընդունվի, նրա գործողությունը չի տարածվի այն անձանց վրա, ովքեր սեփականություն են կուտակել հանցավոր միջոցով թմրանյութերի եւ զենքի ապօրինի առևտուր, ահաբեկչություն, թրաֆիքինգ եւ ովքեր կատարել են անդրազգային հանցագործություններ, ինչպես նաեւ ծառայողներ եւ նրանց հավա-

սարեցված անձինք, որոնց մասին խոսում է Վրաստանի քրեական օրենսգրքի XXXIX գլուխը:

Օրինագիծն համաձայն, ներկայացված անձանց դատվածությունը կվերացվի օրենքով նախատեսված կարգով:

Օրինագիծը նաեւ սահմանում է չհայտարարված հարկային պարտքերի եւ թաքցրած սեփականության ազատակամացման ու հայտարարագրման կանոնները:



ԶԱՎԱՆԻՇՎԻԼՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ 95 ՏԱՐԵԿԱՆ

Վրաստանի վարչապետ Բիծինա Իվա-նիշվիլին Թբիլիսիի Ջավախիշվիլու անվան պետական համալսարանին շնորհավորել է բուհի հիմնադրման 95-ամյակի առթիվ: Վարչապետի շնորհավորագրում մասնավորապես ասվում է. «Ցանկանում եմ բուհը փառաբանել որպես ժողովրդավարական եւ ազատ երկրի գիտելիքների եւ գիտության օջախ»:

ՈԼՈՐՏ

ՄԱՆՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵՋՆԵՐ ՄԵԽԱՆԻՉԱՏՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՏՐԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ եւ կրթության նախարարության ու ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) աջակցությամբ, Կաժրեթի, Ախալցխի, Անրոլուրի, Քորուլեթի, Օզուրգեթի, Սենակի, Գորի, Դիդի Զիխախի պետական մասնագիտական քոլեջներում 35-օրյա վերապատրաստման դասընթացներ կանցնի շուրջ 900 տրակտորիստ-մեխանիզատոր:



րը կկարողանան լիարժեք յուրացնել եւ օգտագործել նոր տեխնիկայի հնարավորությունները: Դասընթացները կանցկացվեն 2013 թվականի փետրվարից մինչեւ ապրիլը ներառյալ:

Մեխանիզատորների վերապատրաստման ուսումնական ծրագրի համաձայնագիրը ստորագրել են գյուղատնտեսության նախարար Դավիթ Կիրվալիձեն, կրթության փոխնախարար Բեթեան Նադիրաշվիլին, Վրաստանում UNDP ղեկավար Ջեյմի Մակգոլդրիկը եւ «Մեխանիզատոր» ընկերության տնօրեն Վաժա Նախուրիշվիլին:

Կիրվալիձեն նշել է, որ ուսումնական դասընթացներ անցած մեխանիզատորները կկարողանան լիարժեք յուրացնել եւ օգտագործել նոր տեխնիկայի հնարավորությունները: Դասընթացները կանցկացվեն 2013 թվականի փետրվարից մինչեւ ապրիլը ներառյալ:

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԴՐՈՂՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈՒԿԱ ԴԱՌՆՈՒՄ Ե ԻՐԱՏԵՍԱԿԱՆ



Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն այն կարծիքին է, որ իրական է այն հնարավորությունը, որ արդեն մինչեւ գարուն վրացական գինին ու հանքային ջուրը կվերադառնան ռուսական շուկա:

գում»,- փետրվարի 14-ին «Մաեստրո» հեռուստալիքի եթերում հայտարարել է Աբաշիձեն: Նրա խոսքերով՝ հաջորդ շաբաթ ռուս փորձագետները պատրաստվում են ժամանել Վրաստան, որտեղ կծանոթանան այն ձեռնարկությունների աշխատանքին, որոնք իրենց արտադրանքը ՌԴ-ի շուկային մատակարարելու պատրաստակամություն են հայտնել:

«Իրական է այն հեռանկարը, որ մինչեւ գարուն վրացական գինին եւ հանքային ջուրը կվերադառնան ՌԴ-ի շուկա»,- ասել է Աբաշիձեն հավելելով, որ մինչեւ փետրվարի վերջը ծրագրվում է վրացի եւ ռուս փորձագետների հանդիպում, որը նվիրված կլինի Ռուսաստան նաեւ մրգերի եւ գյուղատնտեսական այլ արտադրանքի արտահանման հարցերին:

«ՌԴ-ի ԱԳ փոխնախարար Գրիգոր Կարասինի հետ մեր առաջին հանդիպումից հետո ընդհանրապես երկու ամիս է անցել, բայց այդ ընթացքում արդեն առաջընթաց է դիտվում մեր երկրների միջեւ առևտրական հարաբերությունների կարգավորման հար-

ցումը: Ուստի նոր կառավարության գործունեության հիմնական ուղղությունն այն է, թե լրացուցիչ ինչ քանակությամբ աշխատատեղեր կստեղծվեն երկրում, ինչ թվով ձեռնարկություններ կբացվեն եւ այլն»,- համարում է Մաճավարիանին:

«Վրացվիճակագրության» գործադիր

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԸ ԷԱԿԱՆՈՐԵՆ ԶԻ ՓՈԽՎԵԼ

2011 թվականի համեմատությամբ Վրաստանում զբաղվածության ցուցանիշը անցյալ տարի էականորեն չփոխվեց: «Վրացվիճակագրությունը» խոստացել է 2012 թվականի ճշգրտված վերջնական ցուցանիշերը հրապարակել մայիսին:

Տնտեսական հարցերի փորձագետ Վան Սաճավարիանին հայտարարել է, որ վերջին երեք ամսում ոչ մի տեղեկատվություն նոր աշխատատեղերի ստեղծման մասին չի եղել:

Վրաստանի տնտեսության գլխավոր հիմնախնդիրը եղել է մնում է գործազրկու-

թյունը: Ուստի նոր կառավարության գործունեության հիմնական ուղղությունն այն է, թե լրացուցիչ ինչ քանակությամբ աշխատատեղեր կստեղծվեն երկրում, ինչ թվով ձեռնարկություններ կբացվեն եւ այլն»,- համարում է Մաճավարիանին:

«Վրացվիճակագրության» գործադիր

փոխտնօրեն Թենգիզ Ցեկվալան հայտարարել է, որ մեկ եռամսյակի տվյալներով հնարավոր չէ ստեղծել զբաղվածության ընդհանուր պատկերը: Դրա համար անհրաժեշտ է ունենալ տվյալներ ամբողջ տարվա համար:

Զբաղվածության վիճակագրությունը պարզելու համար, անհրաժեշտ է հարցում անցկացնել շուրջ 3 հազար ընտանիքների շրջանում, եւ տեղեկություններ ունենալ բիզնես-ընկերություններում աշխատանքի տեղավորվածների մասին:

ՍԱԿԱԳՆԻ ՆՎԱՁԵՑՈՒՄ. ԵԹԵ ՈՉ ՓԵՏՐՎԱՐԻՆ, ԱՊԱ ՄԱՐՏԻՆ

Էներգետիկայի նախարար Կախա Կալաձեն հայտարարել է, որ, եթե չգտնվեն էլեկտրակայանների սպառողական սակագնի նվազեցման ուղիներ, ապա մարտի 31-ից հետո կգործի գոյություն ունեցող այժմյան սակագինը:

Նա ասել է, որ ժամանակավոր սակագնի եռամսյա ժամկետը լրանում է մարտի 31-ին:

«Ընկերությունների հետ եռամսյա համաձայնագիրը կնքվել էր Վրաստանի կառավարության նախաձեռնությամբ, քանի որ մենք հանգամանորեն ցանկանում ենք ուսումնասիրել, թե արդյոք այն ավելի նվազեցնելու հնարավորություն կա՞, թե՞ ոչ: Դուք գիտեք, որ մենք կարողացանք սակագինը նվազեցնել միայն սպառողների առաջին երկու կատեգորիաների համար: Նրանց համար, ովքեր սպառում են ավելի քան 301 կիլովատտ, սակագինը մնում էր նախկինը: Համաձայնագիրը ուժի մեջ է մինչեւ մարտի 31-ը եւ,

եթե չգտնվեն նվազեցման ուղիներ, մարտի 31-ից հետո սակագինը կմնա նվազեցված միայն 3,54 թեթրիով»,- ասել է Կալաձեն:

Ինչ վերաբերում է բնական գազին, նախարարը նշել է, որ, եթե չհաջողվի գազի սակագինը նվազեցնել փետրվարին, նոր սակագինը կսկսի գործել մարտից: Կալաձեն նշել է նաեւ, որ հաջորդ շաբաթ արդեն հնարավոր կլինի նշել ստույգ ժամկետները, եթե որ օրվանից բնակչությունը կօգտվի նոր սակագնից:



ՀԱՏՈՒԿ ԽՈՐՀՈՒՐԴ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԱՐՑՈՎ

Առողջապահության նախարար Դավիթ Սերգենկոն հայտարարել է, որ գերատեսչությունում գործում է հատուկ խորհուրդ, որը կզբաղվի մանկական մահացության հիմնախնդրով: «Մանկական մահացության մակարդակը որոշվում է այն պարագայով, թե յուրաքանչյուր հազար երեխայից որքան են հասնում հնգամյա տարիքի: Վրաստանում այդ ցուցանիշը կազմում է 12,3 տոկոս: Եվրոպայում այդ ցուցանիշը 4 տոկոս է, իսկ առավելագույնը համարվում է 150-ը: Այսպիսով, Վրաստանում մանկական մահացության հետ կապված իրավիճակը բավականին լուրջ է, սակայն նկատելի է, որ այն նվազում է»,- ասել է նախարարը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԸ ԿՓՈԽՎԻ

Առողջապահության նախարարությունն աշխատում է սոցիալապես անապահով քաղաքացիներին օգնություն ցույց տալու մեթոդաբանությունները կատարելու ուղղությամբ:

Այս մասին հաղորդել է նշյալ գերատեսչության ղեկավար Դավիթ Սերգենկոն՝ հա-

ղորդելով, որ նախարարությունն իր նկատառումները մոտ ժամանակներս կներկայ-

յացնի խորհրդարան: «Այսպես թե այնպես, բավականին դժվար է պարզել, թե ինչ կարիք է զգում այս կամ այն մարդը: Ոչ մի մեթոդաբան չի կարող լինել կատարյալ, սակայն մենք կաշխատենք մոտ լինել դրան»,- նշել է Դավիթ Սերգենկոն:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԿԱՆԱՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՂՎԱԾ ՔԱՅԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սահմանադրական փոփոխությունների նախագիծը եւ երկրում տեղի ունեցած վերջին իրադարձությունները:

Գրեթե մեկ ժամ տեսած հանդիպումից հետո կողմներն անցկացրին համատեղ ասուլիս, որի ժամանակ Կրաստանի նախագահ Միխեյլ Սահակյանը, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին եւ խորհրդարանական փոքրամասնության ղեկավար Դավիթ Բաքրաթեն հանդիպումն անվանեցին «գործնական»:

«Հանդիպումը գործնական էր, եւ չեմ կարող ասել, որ մենք համաձայնության եկանք բոլոր հարցերի շուրջ, բայց ամենազխամբորդ այն է, որ երկխոսությունը կշարունակվի: Մենք արտահայտեցինք մեր դիրքորոշումները եւ այժմ մեր հայացքները կքննարկենք փոքրամասնության շրջանում, նրանք՝ մեծամասնության»,- քաջբերված մանլո ասուլիսը հայտարարեց Կրաստանի նախագահը:

Իր հերթին Դավիթ Ուսուփաշվիլին ընդգծեց, որ այսօրվա հանդիպումից հետո իր մոտ ստեղծվեց այն տպավորությունը, որ երկխոսությունն անհեռանկարային չէ:

«Համաձայնության հասնելը դեռեւս հեռու է, սակայն ամենքս ես հանգեցի այն կարծիքին, որ դա անհեռանկարային խոսակցություն չէ... Կարծում եմ, որ երկու կողմերը լավ են հասկանում, որ հարկավոր է պայմանավորվել»,- նշեց նա՝ հավելելով, որ քննարկվել են «ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ թեմաներ»:

Նա հաղորդեց, որ «բանակցությունների ընթացքում արժարժեքներ են նոր սխեմաներ, որոնք կարող են իրապարակվել առաջիկա օրերին»: Խորհրդարանի նախագահի խոսքերով՝ այս փուլում կողմերը

կանցկացնեն ներկուսակցական կոնսուլտացիաներ, ինչից հետո կկայանա հաջորդ հանդիպումը:

Խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլին նաեւ հայտարարեց, որ ինքը չի բացառում վարչապետ Բիծինա Իվանիշվիլու մասնակցությունը նախագահի հետ երկխոսությանը:

«Հանդիպումներին կմասնակցեն այն մարդիկ, ովքեր այս կամ այն փուլում անհրաժեշտ կլինեն բանակցությունների համար: Վարչապետը հայտարարել է, որ ինքը պատրաստ է ամենքս միանալ այդ գործընթացներին: Հարցերի մեծ մասը, որոնց շուրջ մենք խոսեցինք, խորհրդարանական թեմատիկան էր, ուստի պատահական չէ, որ հանդիպմանը ներկա էր փոքրամասնության ղեկավար պարոն Բաքրաթեն: Եթե լինի անհրաժեշտություն, ապա բացառված չէ, որ վարչապետը կներգրավի նաեւ այլ մարդկանց՝ դա կախված է հարցերից ու թեմատիկայից», - հայտարարել է խորհրդարանի խոսնակը:

Ինչ վերաբերում է ամենամյա հաշվետվությանը Կրաստանի նախագահի Ելույթի խորհրդարանում, ապա Ուսուփաշվիլին մեկ անգամ եւս պարզաբանեց, որ «Ելույթը սոսկ հետաձգվել է»:

«Մենք մեր որոշումը բարձրաձայնեցինք հստակորեն՝ խորհրդարանը չի հրաժարվում ունկնդրել նախագահին, մենք սոսկ հետաձգեցինք Ելույթը... Առաջադիմության ընթացքում խորհրդարանը պատրաստ կլինի լսել նախագահին, նրա կարծիքները, իսկ մենք նրան կներկայացնենք մեր կարծիքները», - հայտարարել է Ուսուփաշվիլին:

Հանդիպումից գոհ է նաեւ Բաքրաթեն, ընդգծելով, թե կան հարցեր, որոնց կապակցությամբ համաձայնություն ձեռք չի բերվել, սակայն կան հարցեր, որոնց շուրջ կարելի է հասնել համաձայնության:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՉԱՅՆՈՒՄ Ե ԿԻՆՈՒՄ ԴԱՏԱՊԵՏՆԵՐԻ ԿԱԿԱՆԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՏԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Կրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին դատապարտել է փետրվարի 8-ի ակցիայի մասնակիցների դրսևուրած բռնությունը եւ նշել. «Սահմանադրությամբ երաշխավորված քաղաքացիական բողոքի արտահայտությունը պետք է լինի միայն ոչ բռնի եւ միայն օրենքի շրջանակներում»:

Նա ասել է, որ «ավելի լավ կլիներ», եթե նախագահ Միխեյլ Սահակյանը ամենամյա հաշվետվությանը ելույթ ունենար երկու շաբաթ ուշ: Ի դեպ, նախագահի ճանուցում, որ նույն օրը հնչեց նրա նստավայրում, վարչապետը բացա-

հայտել է ուշադրության արժանի մի քանի հանգամանքներ:

Վարչապետը հայտարարել է, որ նախագահի լիազորությունները սահմանափակման օրինագիծն ընդունելուց հետո կալիցիան պատրաստ կլինի ունկնդրելու փոքրա-

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԿԱՆ ՄԵԾԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՆՉՈՐՍ ԱՈՒՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրաստանի խորհրդարանի մեծամասնությունը, փոքրամասնության պատգամավորներին առաջարկում է Կրաստանի արտաքին քաղաքական կուրսի վերաբերյալ փաստաթղթի իր տարբերակը:

Ի տարբերություն Կրաստանի Սահմանադրության մեջ համապատասխան ուղղումների օրինագիծ, որը պետք է ամբողջությամբ Կրաստանի Ելույթի պալատի կողմից կերտվի, խորհրդարանը մեծամասնությամբ կարող է որպեսզ ամբողջությամբ չի օգտագործի խորհրդարանի կողմից համաձայնագիրը բաղկացած է 14 կետից եւ նրանում սահմանվել են Կրաստանի արտաքին քաղաքական կուրսի հիմնական դրույթները, այդ թվում՝ գլխավոր խնդիրը՝ անկախությունը, ինքնիշխանության եւ միջազգայնորեն ճանաչված սահմաններում տարածքային ամբողջականությունը:

Համաձայնագիրը բաղկացած է 14 կետից եւ նրանում սահմանվել են Կրաստանի արտաքին քաղաքական կուրսի հիմնական դրույթները, այդ թվում՝ գլխավոր խնդիրը՝ անկախությունը, ինքնիշխանության եւ միջազգայնորեն ճանաչված սահմաններում տարածքային ամբողջականությունը: «Արտաքին քաղաքական կուրսը պետք է հիմնվի ազգային շահերի եւ միջազգային պարտավորությունների հավասարակշռության վրա», - ասվում է փաստաթղթում:

Կրաստանի արտաքին քաղաքականության առաջնություն է նշվում ինտեգրումը եվրոպական եւ եվրատլանտ-

յան կառույցներին, ինչի նախադրյալ պետք է դառնա ժողովրդավարական արժեքների եւ միջազգային իրավունքի սկզբունքների արմատավորումը: Միջազգային գործողություններին մասնակցությունը սահմանվել է որպես ազգային շահերի պաշտպանության կարենորակային բաղադրատարրերից մեկը: ԱՄՆ-ը անվանվում է որպես Կրաստանի գլխավոր դաշնակից, սակայն, միեւնույն ժամանակ, նշվում է, որ Կրաստանը պետք է չլինի Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջև դիմակայության մասնակիցների թվում:

«Կրաստանը պետք է պատրաստ լինի երկխոսություն սկսելու Ռուսաստանի հետ՝ միջազգային մեխանիզմների կիրառմամբ, նպատակ ունենալով մշակել գոյություն ունեցող ճգնաժամի փուլ առ փուլ հարթահարման, երկրի զինագրավման վերացման եւ ինքնիշխանության պաշտպանության ռազմավարություն», - ասվում է փաստաթղթում:

մասնության կարծիքները մյուս օրինագծերի մասին, եւ դրանք համադրել վրաց եւ միջազգային փորձագետների կարծիքների հետ:

«Ես մեկ անգամ եւս հայտարարում եմ, որ պատրաստ եմ փոխհարաբերությունների նախագահի ու նրա քաղաքական թիմի հետ՝ անշեղորեն պահպանելով Սահմանադրությունը եւ օրենքի գերակայությանը սկզբունքը», - հայտարարել է Կրաստանի վարչապետը:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

«Վարչական երազանք» կոալիցիայի եւ նախագահի թիմի միջև դիրքորոշումների մերձեցումը հնարավոր է:



Այդ մասին Կրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին հայտարարել է խորհրդարանական փոքրամասնության ղեկավար Դավիթ Բաքրաթենի հետ խորհրդատվություններից հետո:

«Կոնկրետ խոսել դեռեւս վաղ է, քանի որ մենք կետ առ կետ քննարկում ենք Սահմանադրությունը եւ առաջարկված սահմանադրական փոփոխությունները, սակայն աշխատանքն ընթանում է ճիշտ ուղղությամբ», - նշել է նա:

Ուսուփաշվիլին համոզված է, որ «ամեն ինչ կլուծվի այնպես, որպեսզի երկիրը առաջ ընթանա»:

Բաքրաթեն ընդգծել է, որ խոսակցի կողմից եղավ նոր առաջարկություն:

«Այսօր են լսեցի շատ կառուցողական նոր առաջարկություններ, ու մենք ներկայացրինք հանդիպակց առաջարկություններ, եւ կարծում եմ, որ մոտ օրերս աշխատանքը կշարունակվի», - ասել է Բաքրաթեն, սակայն միաժամանակ հրաժարվել կոնկրետ մեկնել այդ առաջարկությունները:

ՆԱԽԱՋԵՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂՎԱԾ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ



Ինչպես արդեն հաղորդել ենք, Կրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին, իր գլխավորած կառավարության գործունեության 100-օրյա արդյունքների համազուգումարմանը նվիրված մամուլի ասուլիսում բարձրացրեց երկրի էկոնոմիկայի զարգացումն արագացնելու նպատակաուղղված երեք հիմնադրամների հիմնման նախաձեռնությունը:

Մասնավորապես, ներդրումների ծավալների եւ, ընդհանրապես, ներդրողների ավելացման նպատակով

ծրագրվում է հիմնել ինքնուրույն, անկախ հիմնադրամ: Շուրջ 2 միլիարդ ԱՄՆ դոլարի ծավալով այդ հիմնադրամը նպատակ ունի ռազմավարական նախագծերի իրականացմանը: 20 միլիոնից մինչեւ 50 միլիոն ԱՄՆ դոլարի նախնական կապիտալով նորարարական կամ երիտասարդական հիմնադրամը ֆինանսավորելու է երիտասարդական նախագծերը, աջակցելու է նոր եւ հեռանկարային գործարարությանը: Եվս երկու միլիարդ ԱՄՆ դոլարի կապիտալով նախատեսված մասնավոր ներդրումային հիմնադրամը համաֆինանսավորում կիրականացնի ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղի ներդրողներին:

Ինքնուրույն, անկախ հիմնադրամը կազմավորվելու է գործընկերային հիմնադրամի բազայի վրա՝ վերջինիս վերակազմավորման պայմաններում: Հիմնադրամին վերապահվելու են հողինոցային գործառույթներ: Այն իր տնօրինության տակ կունենա պետական ակտիվներն ու կիրականացնի ռազմավարական նախագծերը:

Նորարարական կամ երիտասարդական հիմնադրամը գլխավորապես նպատակաուղղված է լինելու երիտասարդ գիտնական-

ներին ու գործարարներին սեփական նախաձեռնությամբ նորարարական նախագծեր իրականացնելու աջակցությանը: Հիմնադրամը յուրաքանչյուր մեկ նախագծի ֆինանսավորման համար նախատեսում է հատկացնել 100 հազարից մինչեւ 150 հազար լարի: Հիմնադրամը կողմնորոշվելու է բարձր տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների, բժշկության եւ նորարարական մյուս ոլորտների ֆինանսավորմանը:

Ինչ վերաբերում է մասնավոր ներդրումային հիմնադրամին, ապա, ինչպես նշեց վարչապետը, դա նրա վաղեմի նպատակն էր եւ մասն հիմնադրամի հիմնումը լրացուցիչ ազդակ կդառնա ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրումների ծավալների ավելացման համար: Մասնավոր, ներդրումային հիմնադրամը որպես համաֆինանսավորող կմասնակցի տեղի եւ օտարերկրյա ներդրողների կողմից երկրում իրականացվող նախագծերին: Ըստ հիմնադրամի նախաձեռնողների մտահղացման, հետաքրքիր նախագծերի դեպքում, անկախ նրանից, թե իրականացնողները կլինեն տեղացիներ, թե օտարերկրացիներ, հիմնադրամը պատրաստ կլինի համաֆինանսավորել նախագիծը դրա արժեքի 75 տոկոսի չափով՝ մնացած մեկ քառորդը իրականացնող ներդրողների կողմից ֆինանսավորման պայմանով:

Կառավարության հաշվարկումներով, սկզբնական փուլում հիմնադրամների նախ-

նական կապիտալը կազմավորվելու է տեղական ներդրումների հաշվին, քանզի օտարերկրյա ներդրումների գրավման համար կապահանջվի որոշակի ժամանակ: Խոսքը վերաբերում է ոչ միայն հիմնադրամների կանոնադրության հստակեցմանն ու կարգավորմանը, այլեւ ներկայացվող նախագծերի մշակմանը, առաջնաիերությունների ներկայացմանը եւ այլն:

Հատկանշական է մի հանգամանք: Իսկ Բիծինա Իվանիշվիլու վերոնշյալ հիմնադրամներում, բացառված չէ, որ կներկայացվի նաեւ իր կապիտալը, թեպետ հիմնադրամի կառավարման հետ, վարչապետի հավատարմությամբ, դա ոչ մի կապ չի ունենա: Ըստ վարչապետի՝ հիմնադրամները կկառավարվեն հատուկ խորհուրդների կողմից եւ կգործեն բացարձակապես անկախ ու ինքնուրույն:

Փորձագետների գնահատմամբ, վերոնշյալ հիմնադրամների կազմավորումը, ծրագրված նախնախական կապիտալների ծավալները թույլ են տալիս ենթադրելու, որ կառավարությունը, իրականում մտադիր է գործնական քայլեր իրականացնել երկրի էկոնոմիկայի խթանման ուղղությամբ, ինչը թույլ կտա հիմնել նոր արտադրություններ, բացել նոր աշխատատեղեր, հնարավորինս նվազեցնել գործազրկության մակարդակը, ինչը ինքնուրույն կանոնադրման մարդկանց բարեկեցության վրա: Թեպետ, ընդգծվում է նաեւ հիմնադրամների կողմից տրամադրվող միջոցների նկատմամբ հասարակական վերահսկողության անհրաժեշտությունը, ինչն էլ կարող է դառնալ դրանց արդյունավետ օգտագործման գրավականը:

Ավելացնենք, որ վերոնշյալ հիմնադրամներից անկախ, ինքնուրույն կգործի գյու-

ղատնտեսության զարգացման հիմնադրամը, որն, արդեն կազմավորման գործընթացում է: Նշենք, որ դեռ մինչեւ ընտրությունները Բիծինա Իվանիշվիլին հայտարարում էր, որ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը կազմվելու է մեկ միլիարդ ԱՄՆ դոլար, սակայն ներկա դրությամբ չի բացառվում, որ հիմնադրամը շատ ավելի միջոցներ կունենա, քանզի արդեն այսօր սույն հիմնադրամը գյուղատնտեսական զարմանային աշխատանքների համար պատրաստ է վարկերի տեսքով ոլորտին տրամադրել 700 հազար դոլար:

Մասնավորապես, «Նվազագույն հողամասերով ֆերմերներին զարմանային աշխատանքների կատարման աջակցության» նախագծի շրջանակներում սկսել է գյուղատնտեսական քարտերի բաշխումը: Քարտերում նշված է զարմանային աշխատանքների համար իրականացվելիք աշխատանքների համար անհրաժեշտ մյուլթերի եւ գյուղգործիքների ձեռքբերման համար բավարար գումար:

Նշենք, որ գյուղատնտեսական քարտեր կստանան բոլոր այն գյուղացիները, որոնք իրենց տնօրինության տակ ունեն մինչեւ հինգ հեկտար հողատարածք: Քարտով տրվող գումարի մեծությունը կախված է հողամասի չափերից: Այսպես մինչեւ 0,25 հեկտար հողամաս ունեցողները կստանան 100 լարիանոց գումար, 0,25-ից մինչեւ 1,25 հեկտար ունեցողները՝ 510 լարի, 1,25-ից մինչեւ 5 հեկտար ունեցողները՝ 640 լարի:

Ավելացնենք, որ գյուղատնտեսական քարտերի բաշխումը մեկնարկեց փետրվարի 12-ին, Քվեմո Քարթլիի տարածաշրջանից: